# ՋԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ____________________

«_____» ______________202__թ.

______________________________________________________________________________
Ֆիզիկական անձի ազգանուն, անունը

այսուհետ՝ «Պատվիրատու», մի կողմից, և «Ադամանտ» ՍՊԸ, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս՝ տնօրեն Ա.Մարտիրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն Պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն Պայմանագրի 1.2 կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել դրա համար:
1.2. Մատուցվող ծառայությունները ներառում են
1.3. Փաթեթի տեսակը՝ ☐ Հյուրանոցային փաթեթ ☐ Զբոսաշրջային փաթեթ

Ծառայությունից օգտվում են ☐ պատվիրատուն ☐ ընտանիքի 1 անդամ ☐ ընտանիքի 2 անդամ ☐ ընտանիքի 3 անդամ ☐ ընտանիքի 4և ավել անդամ

Հանգստի սկզբից «_____»_______________ 202__թ. Ժամ ________հանգստի ավարտ «______»_______________202__թ. Ժամ_____

Հանգիստ ____________________________________________________________________-ում
նշել մարզը, քաղաքը, հյուրանոցի լրիվ անվանումը

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| ☐ | Մեկ անգամյա սնունդ | ☐ | Միակողմանի տրանսպորտ | ☐ | Ընտանիքի երկու անդամ | ☐ | Բուժում |
| ☐ | Երկու անգամյա սնունդ | ☐ | Երկկողմանի տրանսպորտ | ☐ | Ընտանիքի երեք անդամ | ☐ | Հավելյալ վճարովի ծառ. |
| ☐ | Երեք անգամյա սնունդ | ☐ | Ընտանիքի մեկ անդամ | ☐ | Գիդ | ☐ | Էքսկուրսիա |
| ☐ | Այլ ծառայություններ | ☐ | | ☐ | | ☐ | |

Զբոսաշրջային փաթեթի ընտրության դեպքում
Հանգստի սկիզբ «_____»_______________ 202__թ. հանգստի ավարտ «______»_______________ 202__թ.

______________________________________________________________________________
Էքսկուրսիոն ծառայությունների դեպքում շրջագայության երթուղի

## 2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝
2.1.1. Ծառայությունը մատուցել պատշաճ որակով,
2.2. Պատվիրատուն պարտավոր է պահպանել Պայմանագրով նախատեսված պայմաններն ու կանոնները,
2.3. Պայմանագրի առարկան հանդիսացող ծառայությունները համարվում են մատուցված հանձնման-ընդունման ակտը ստորագրելու պահին
2.4. Պատվիրատուն իրավունք ունի՝
2.4.1. Ցանկացած ժամանակ ստուգել մատուցվող Ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը,
2.5. Զբոսաշրջիկը պարտավոր է ծառայությունները ընդունել պատշաճ կարգով, ծառայությունների մատուցման ընթացքում բանավոր կամ գրավոր տեղեկանալ զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության ընթացակարգերին՝ զբոսաշրջային միջոցառումները պատշաճ որակով կազմակերպելու նպատակով:

## 3. Պայմանագրի գինը և հաշվարկման կարգը

3.1. Պայմանագրի գինը կազմում է՝ ________________ (__________________________________________) ՀՀ դրամ, որից հյուրանոցի արժեքը՝ ________________ (__________________________________________) ՀՀ դրամ:
3.2. Պատվիրատուի կողմից Կատարողին Պայմանագրի 3.1. կետում նշված պայմանագրի գինը վճարվում է ամենամսյա պարբերականությամբ ըստ որում վերջին վճարումը կատարվում է մինչև դեկտեմբերի 31-ը, իսկ առաջին վճարումը կատարվում է Պատվիրատուի կողմից Պայմանագիրը ստորագրելուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում:

## 4. Կողմերի պատասխանատվությունը

4.1. Պայմանագրի 1.3. կետում նշված Ծառայությունների մատուցման կամ 3.2. կետում նշված վճարման ժամկետների ոչ պատշաճ կատարման դեպքում խախտող կողմը մյուս կողմին վճարում է տուգանք հետևյալ կարգով.
Ուղևորությունից 2 և ավելի օր առաջ Պայմանագրից հրաժարվելու դեպքում Պայմանագրի գնի 25%-ը
Ուղևորությունից 24 ժամ առաջ Պայմանագրից հրաժարվելու կամ պայմանագրով նախատեսված ծառայություններից ընդհանրապես չօգտվելու դեպքում Պայմանագրի գնի 50%-ը
4.2. *Պայմանագրի վաղաժամկետ դադարման կամ մասնակի կատարման դեպքում սպառողին վերադարձման ենթակա գումարը, որը փոխանցվել է զբոսաշրջային օպերատորին, վերջինս գումարը փոխանցում է բացառապես սպառողի սոցիալական փաթեթի հաշվին:*

## 5.Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

Սույն Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է Անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 6.Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև առաջացած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնության չգալու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

## 7. Եզրափակիչ դրույթներ

7.1.Պայմանագրում ցանկացած փոփոխություն և լրացում վավեր է այն պայմանով, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված՝ Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:
7.2. Պայմանագիրը կազմված է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր կողմի մոտ գտնվում է Պայմանագրի մեկական օրինակ:

## 8 Փոխանցման հաշիվ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
|---|---|
| **Անուն**________________________________ | **«ԱԴԱՄԱՆՏ» ՍՊԸ** |
| **Հասցե** ________________________________ | **Հասցե՝** **Սյունիքի մարզ, գ. Հարթաշեն** |
| | Գործ.հասցե՝ ՀՀ Սյունիքի մարզ, ք. Գորիս, Կոմիտաս 32/ա |
| **Անձնագիր**______________________________ | **ՀՎՀՀ՝** **02225599** |
| **Աշխ. վայր, հասցե** ______________________ | **Բանկ՝** <<ԱՄԵՐԻԱ ԲԱՆԿ>> ՓԲԸ |
| | **Հ/Հ՝** 1570064917300100 |
| | **Տնօրեն՝** **Ա.Մարտիրոսյան** |
| | **Հեռ.՝** **+374 99 329999, +374 99 527243** |
| | **adamanttravel@mail.ru, Կայք՝ www.adamant.am** |
| ______________________ | ______________________**կ.տ.** |
| ստորագրություն | ստորագրություն |